17923

20

ՀԱՅԿԱԿԱՆ Ս.Ս.Ռ.
Ա.Ֆ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանագիտական մեթոդական բաժին

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ)



324(47.925)
Մ-80

ԵՐԵՎԱՆ 1957 թ.

© National Library of Armenia OCR by Portmind

27 SEP 2006

ՀՍՍՌ ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանագիտական մեթոդական բաժին

324 (47.925)
Մ-80
15 JAN 2010

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Մեթոդական նյութեր գրադարանների համար)

ԵՐԵՎԱՆ 1957

© National Library of Armenia

03.07.2013

17923

Կազմեց՝ Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Խմբագրեց՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Государственная Республиканская библиотека
Арм. ССР им. А. Ф. Мясникяна
Методический отдел библиотековедения

Выборы местных советов
Армянской ССР
(Методические материалы для библиотек)

Составитель: Г. МКРТЧЯН
Редактор: А. ЕСАЯН
(На армянском языке)
Ереван — 1957

Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
ա. Մյասնիկյանի անվան
им. А. Мясникяна

9451-57

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունները, որը նշանակված է 1957 թ. մարտի 10-ին, քաղաքական մեծ նշանակություն ունի մեր երկրի կյանքում:*

*Ընտրությունները տեղի են ունենում մեր հայրենիքի հետագա ծաղկման, ժողովրդական տնտեսության նոր հզոր վերելքի և աշխատավորության նյութական բարեկեցության նշանակալից բարձրացման պայմաններում: Կենսագործելով ՍՄԿԿ XX համագումարի պատմական որոշումները, մեր ժողովուրդը կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հաջողությամբ կատարում է նոր՝ վեցերորդ հնգամյակի հոյակապ խնդիրները: Այժմ ամենուրեք բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի մեջ սոցիալիստական մրցություն է ծավալվել այդ խնդիրները ժամկետից շուտ կատարելու համար:*

*Ընտրական կամպանիան ընթանում է Սովետական պետության կողմից՝ միջազգային լարվածության թուլացման, ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման, նոր համաշխարհային պատերազմը սանձազերծող ագրեսիվ ուժերի դեմ ակտիվ պայքար մղելու պայմաններում:*

*Օգտվելով լայն դեմոկրատական ընտրական իրավունքներից մեր աշխատավորությունը այս անգամ նույնպես դեպուտատներ կառաջադրի իր շարքերից լավագույններին՝ կոմունիզմի համար մարտնչող մարտիկներին:*

*Տեղական Սովետների ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործում կարևոր ու պատասխանատու խնդիրներ է դրվում կուլտուր-լուսավորական հիմնարկների, այդ թվում նաև*



© National Library of Armenia

քաղաքի ու գյուղի գրադարանների աշխատողների վրա։ Նրանք պետք է օգնեն պարտիական և հասարակական մյուս կազմակերպություններին՝ ընտրությունների կապակցությամբ տարվող ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքում։ Գրադարանավարները, օգտագործելով նախորդ ընտրական կամպանիայի փորձը, ընտրողներին պետք է բացատրեն կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության՝ ժողովրդի շահերից բխող ներքին ու արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը։ Օգտագործելով գրքի հետ տարվող աշխատանքի բոլոր ձևերն ու մեթոդները, նրանք պետք է լայնորեն պրոպագանդեն ՍՄԿՊ XX համագումարի նյութերը, ՍՍՌՄ Գերագույն Սովետի 6-րդ սեսիայի, ՍՄԿՊ Կենտկոմի (1956 թ.) Դեկտեմբերյան պլենումի որոշումները։ Մամուլի միջոցով ընտրողներին մեր նվաճումները և ՍՍՌՄ հետագա զարգացման մեծագույն հեռանկարները ցույց տալով, գրադարանները կնպաստեն աշխատավորության մոբիլիզացմանը, պարտիայի և կառավարության կողմից առաջ քաշած խնդիրների կատարման համար։ Գրադարանավարները պետք է լայնորեն հանձնարարեն հասարակական-քաղաքական գրքեր, գեղարվեստական ստեղծագործություններ, պարբերական մամուլում հրապարակված հոդվածներ, ակնարկներ, որոնք լուսաբանում են մեր հայրենիքի մեծագույն նվաճումները, սովետական քաղաքացիների դեմոկրատական իրավունքներն ու ազատությունները։ Պրոպագանդել այն իրականությունը, որը բացահայտում է սովետական մարդկանց համար բարեկեցիկ կյանք ստեղծող՝ պարտիայի ու Սովետական կառավարության վարած քաղաքականությունը, Սովետական պետության՝ խաղաղության և ժողովուրդների անվտանգության համար մղվող հետևողական արտաքին քաղաքականությունը։ Գրադարանավարը պետք է վեր հանի սովետական մարդկանց մեծ հայրենասիրությունը, կոմունիզմի գործին նվիրվածությունը, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և Սովետական ժողովրդի անխախտ միասնությունը, կոմունիստների և անպարտիականների բլոկի շահերի ընդհանրությունը, ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը։

Այս բոլորը կօգնեն ընտրողին լրիվ և խորը ըմբռնելու Սովետական Միության քաղաքացի լինելու մեծ երջանկությունը, որը առաջինը ձեռնարկեց մարդկության լավագույն իղձերի՝ կոմունիստական հասարակարգի կառուցման գործը։

Ընտրողներին ծանոթացնելով սովետական դեմոկրատիայի



առավելություններին, մեր նվաճումների ամբողջ մեծությանը, գրադարանների աշխատողները միաժամանակ պետք է մերկացնեն բուրժուական դեմոկրատիայի կեղծությունը, կապիտալիստական երկրների աշխատավորության իրավունքների ոտնահարումը, ռասայական խտրականությունը, բուրժուազիայի կողմից կիրառվող կամայականությունը և այլն։

Ընտրական կամպանիայի ժամանակ գրադարանավարների կողմից տարվող աշխատանքում հատուկ տեղ պետք է տրվի գրքային ցուցահանդեսի պատրաստմանը, դասախոսությունների և զեկուցումների կազմակերպմանը ագիտ պունկտում, կոլտնտեսային ֆերմաներում, ՄՏԿ-ի արհեստանոցներում, տներում բարձրաձայն ընթերցանությունների, զրույցների անցկացմանը և այլն։

Անհրաժեշտ է ակտիվ կերպով պրոպագանդել աշխատանքի արտադրողականության բարձրացման համար մղվող համաժողովրդական պայքարի, արտադրանքի որակի լավացման, արտադրության ներքին ռեզերվների և կարողության լրիվ օգտագործման մասին անհրաժեշտ գրականությունը, հատկապես կանգ առնելով տվյալ քաղաքի, ռայոնի, կամ գյուղի նվաճումների և հետագա զարգացման հարցերի, արդյունաբերության և գյուղատնտեսության նորարարների առաջավոր փորձի տարածման վրա։

Երիտասարդ, առաջին անգամ ընտրություններին մասնակցող ընտրողների համար անհրաժեշտ է կազմակերպել հանդիպման երեկոներ, նրանց ծանոթացնել ՍՍՌՄ և ՀՍՍՌ կոնստիտուցիաներին, սովետական քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների, ընտրական իրավունքի և կանոնադրության հետ։

Գրադարաններին օգնելու համար Հայկ. ՍՍՌ Ալ. Մյասնիկյանի անվան Պետական ռեսպուբլիկական գրադարանի մեթոդական բաժինը պատրաստել է սույն մեթոդական ձեռնարկը նվիրված Հայկ. ՍՍՌ տեղական Սովետների ընտրություններին։

Մեթոդական ձեռնարկը իր մեջ ընդգրկում է հետևյալ բաժինները՝

Թեմաներ ցուցահանդեսների պատրաստման համար։

Ընտրություններին նվիրված ցուցահանդեսի պլան։

Թեմաներ դասախոսությունների, զեկուցումների կազմակերպման, բարձրաձայն ընթերցանության և զրույցների անցկացման համար։

Հանձնարարվող գրականության համառոտ ցանկ։



© National Library of Armenia

## 1957 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ը ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐՆ Է






## ԹԵՄԱՆԵՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ

1957 թ. մարտի 10-ը տեղական Սովետների ընտրությունների օրն է:

Բոլորս դեպի տեղական Սովետների ընտրությունները:

*Այս թեմայով կարելի է կազմակերպել ցուցահանդեսներ հետևյալ բաժիններով՝*

1. Սովետական միության կոմունիստական պարտիան Սովետական պետության ղեկավարող և ուղղություն տվող ուժն է:

2. Սովետական դեմոկրատիայի առավելությունները:

3. ՍՍՌՄ հասարակական ու պետական կառուցվածքը:

4. Սովետական ընտրական սիստեմը:

5. Հոգատարությունը սովետական ժողովրդի բարօրության նկատմամբ՝ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության գործունեության բարձրագույն օրենքն է:

6. Սովետական Միությունը խաղաղության և ժողովուրդների անվտանգության պատվարն է:

### ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՊԼԱՆ

1. Վ. Ի. Լենինի *պորտրետ:*

2. Ն. Ս. Խրուշչևի *պորտրետ:*

3. *Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագիրը Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրություններ անցկացնելու մասին:*

4. Ն. Ա. Բուլգանինի *պորտրետ:*

5. **Քաղվածք.**— *Ներկայումս մեր պարտիան ավելի միասնական է, քան երբևէ, նա սերտորեն համախմբված է Կենտրոնական Կոմիտեի շուրջը և երկիրը վստահորեն տանում է մեծ Լենինի նշած ուղիով:*

*Խրուշչև Ն. Ս., Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին: Ե., Հայպետհրատ, 1956, էջ 152:*



© National Library of Armenia

6. **Գիրք.**— *ՍՍՌՄ Կոնստիտուցիա։*

7. **Գիրք.**— *Հայկական Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկայի կոնստիտուցիան (հիմնական օրենքը)։ Հայկական Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկայի 4-րդ գումարման Գերագույն Սովետի 2-րդ և 3-րդ սեսիաներում ընդունված փոփոխումներով և լրացումներով։ Ե., Հայպետհրատ, 1957, 32 էջ։*

8. **Քաղվածք.**— *ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 6-րդ հնգամյա պլանի գլխավոր խնդիրներն են՝ ծանր արդյունաբերության առավել զարգացման, տեխնիկական անընդհատ պրոգրեսի և աշխատանքի արտադրողականության բարձրացման հիման վրա ապահովել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետագա հզոր աճը, իրականացնել գյուղատնտեսական արտադրության շեշտակի վերելքը և այդ հիման վրա հասնել Սովետական ժողովրդի նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի նշանակալի բարձրացման։*

*ՍՄԿՊ XX համագումարի Դիրեկտիվները ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1956—1960 թվականների 6-րդ հնգամյա պլանի վերաբերյալ։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 6։*

9. **Գիրք.**— *Խրուշչև Ն. Ս. ՍՄԿՊ XX համագումարի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին։ Ե., Հայպետհրատ, 1956, 187 էջ։*

10. **Գիրք.**— *Թովմասյան Ս. Հ. Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XVIII համագումարին։ Ե., Հայպետհրատ, 1956, 118 էջ։*

11. **Տեքստ.**— *Աշխատավորների դեպուտատների բոլոր Սովետների դեպուտատների ընտրությունները կատարում են ընտրողներն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ։*

*ՍՍՌՄ Կոնստիտուցիա, հոդված 134։*

12. **Գիրք.**— *ՍՄԿՊ XX համագումարի դիրեկտիվները ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1956—1960 թթ. 6-րդ հնգամյա պլանի վերաբերյալ։ Ե., Հայպետհրատ, 1956, 101 էջ։*

13. **Գիրք.**— *Կանոնադրություն Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունների։ Ե., Հայպետհրատ, 1956, 32 էջ։*



14. **Գիրք.**— *Կանոնադրություն Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունների։ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության կողմից սահմանված ընտրական փաստաթղթերի հավելվածով և անհրաժեշտ պարզաբանումներով։ Ե., Հայպետհրատ, 1957, 74 էջ։*

15. **Իլյուստրացիա** *(ՀՍՍՌ Արդյունաբերության վերաբերյալ)։*

16. **Տեքստ.**— *Հոգատարությունը Սովետական ժողովրդի բարորության նկատմամբ, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության գործունեության բարձրագույն Օրենքն է։*

17. **Իլյուստրացիա** *(ՀՍՍՌ Գյուղատնտեսության վերաբերյալ)։*

*յալ)։*

18. **Հանձնարարվող** *գրականության համառոտ ցանկ։*

19. **Գիրք.**— *ՍՍՌՄ Գերագույն Սովետ։ Օրենք Պետական կենսաթոշակների մասին և Կանոնադրություն պետական կենսաթոշակներ նշանակելու և վճարելու կարգի մասին։ Ե., Հայպետհրատ, 1956։*

20. **Գիրք.**— *ՍՄԿՊ Կենտկոմի պլենումի որոշումը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության ղեկավարումը բարելավելու հարցերը։ (Ընդունված է ընկ. Ն. Ա. Բուլգանինի զեկուցման առթիվ)։ Ե., Հայպետհրատ, 1956։*

21. **Թերթ.**— *Նախահանգստյան և նախատոնական օրերին բանվորների ու ծառայողների աշխատանքային օրվա տևողությունը կրճատելու մասին (ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումը)։— «Սովետական Հայաստան», 1956, 10 մարտի։*

22. **Թերթ.**— *ՍՍՌՄ Գերագույն Սովետի 6-րդ սեսիայի նյութերը։— «Սովետական Հայաստան», 1957, 6 փետրվարի։*

23. **Թերթ.**— *Ցածր վարձատրվող բանվորների ու ծառայողների աշխատավարձը բարձրացնելու մասին։ (ՍՍՌՄ Մինիստրների Սովետի, ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և արհեստակցական միությունների համամիութենական կենտրոնական խորհրդի որոշումը)։— «Սովետական Հայաստան», 1956, 19 սեպտեմբերի։*

24. **Հանձնարարվող** *գրականության համառոտ ցանկ։*

25. **Քաղվածք.**— *Անցյալ տարի պարտիան և կառավարությունը իրագործեցին Սովետական ժողովրդի նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացման նպատակին ուղղված խոշոր ձեռնարկումներ։ Մտցվեց պետական կենսաթոշակների նոր Օրենք, որը զգալիորեն բարելավեց կենսա-*



© National Library of Armenia

*թոշակային ապահովման գործը։ 1956 թ. հոկտեմբերի 1-ից զգալիորեն ավելացվեցին համարյա 15 միլիոն մարդկանց պետական կենսաթոշակները, բացի դրանից մինչև 1956 թ. վերջերը նոր Օրենքի համաձայն ավելացված կենսաթոշակ էին ստանում կենսաթոշակի նոր անցած մոտավորապես մեկ միլիոն մարդ։ Միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում վերացվեց ուսման վարձը, կրճատվեց աշխատանքային օրը նախատոնական և նախատոնական օրերին, ավելացվեց հղիության ու ծննդաբերության արձակուրդների տևողությունը, 16-ից մինչև 18 տարեկան դեռահասների համար սահմանվեց 6-ժամյա աշխատանքային օր և 15-ից մինչև 16 տարեկան դեռահասների համար՝ 4-ժամյա աշխատանքային օր։ Ածխարդյունաբերության մեջ սկսվեց բանվորների փոխադրումը կրճատ աշխատանքային օրվա, որոշում ընդունվեց ցածր վարձատրվող բանվորների և ծառայողների աշխատավարձը 1957 թ. հունվարի 1-ից բարձրացնելու մասին։ Բարձրացվեցին շաքարի ճակնդեղի, բամբակի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգեղենի և գյուղատնտեսական այլ մթերքների մթերման գները։ Միաժամանակ զգալիորեն իջեցվեցին կոլտնտեսությունների համար ՄՏ կայանների կատարած աշխատանքի բնավարձի դրույքները շաքարի ճակնդեղի և բամբակի գծով։ Հիշյալ ձեռնարկումները, որոնք ընդունվեցին և որոնց իրականացումը սկսվեց 1956 թվականին, քաղաքային և գյուղական բնակչության համար տարեկան ապահովում են ավելի քան 35 միլիարդ ռուբլու լրացուցիչ օգուտ։*

*ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1956 թվականի պետական պլանի կատարման արդյունքների մասին։ § 9։ «Սովետական Հայաստան», 1957, 2 փետրվարի։*

## ԹԵՄԱՆԵՐ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Սովետական Միության Կոմունիստական Պարտիան կոմունիզմ կառուցող սովետական հասարակության կազմակերպող և ուղղություն տվող ուժն է։

2. Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարը և Կոմունիստական շինարարության խնդիրները ՍՍՌՄ-ում։

3. Կոմունիստական պարտիայի, Սովետական կառավարության և ժողովրդի անխախտ միասնությունը մեր Հայրենիքի ուժի և անպարտելիության աղբյուրն է։

4. ՍՍՌՄ-ի զարգացման 6-րդ հնգամյա պլանը որպես խոշոր առաջընթաց քայլ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ճանապարհին։

5. ՍՄԿՊ Կենտկոմի Դեկտեմբերյան (1956 թ.) պլենումի որոշումները։

6. Սովետական Միությունը որպես հզոր ինդուստրիալ կոլտնտեսային տերություն։

7. ՍՍՌՄ Կոնստիտուցիան հաղթանակած սոցիալիզմի կոնստիտուցիան է։

8. Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետները որպես ՍՍՌՄ պետական իշխանության օրգաններ։

9. ՍՍՍՄ ժողովուրդների մեծ բարեկամությունը։

10. Սովետական հայրենասիրության մեծ ուժը։

11. Պարտիայի և կառավարության հոգատարությունը սովետական ժողովրդի նյութական բարեկեցության նկատմամբ։

12. ՍՍՌՄ արտաքին քաղաքականությունը ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման քաղաքականություն է։

13. Սովետական Միության և Չինական ժողովրդական ռեսպուբլիկայի ժողովուրդների մեծ բարեկամությունը։

14. Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդները խաղաղության և ազգային անկախության համար մղվող պայքարում։

15. Սովետական Միության պայքարը զինաթափման և միջազգային լարվածությունը թուլացնելու համար։

16. Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների անխախտ բարեկամությունը և համագործակցությունը։

17. Սովետա-Չեխոսլովակյան բանակցությունները Մոսկվայում։

18. ՍՍՌՄ Գերագույն Սովետի 6-րդ սեսիայի նյութերը։

*Վերը հիշատակված միջոցառումները անցկացնելիս ցանկալի է, որպեսզի գրադարանավարները տեղերում սերտ կապ պահպանեն պարտիական գրադարանների, կուլտուրայի տների, ակումբների հետ, դասախոսությունների և զեկուցումների համար ներ-*





© National Library of Armenia

գրավեն պրոպագանդիստներին, պարտիական ու կոմերիտական ակտիվին, քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության, լեկտորիումների և դասախոսական խմբակների անդամներին։

## ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՑԱՆԿ

### 1. Սովետական Միության Կոմունիստական պարտիան Սովետական պետության ղեկավարող և ուղղություն տվող ուժն է։

Մարքս Կ. և Էնգելս Ֆ.— *Կոմունիստական պարտիայի մանիֆեստը։ Ե., Հայպետհրատ, 1952, 79 էջ։*

Լենին Վ. Ի.— *Պետության մասին։ «Երկեր» հտ. 29։ Ե., Հայպետհրատ, 1951, էջ 578—604։*

Սովետական *Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարի բանաձևը։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 27—34։*

Խրուշչև Ն. Ս.— *Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 150—157, 182—183։*

Բուլգանին Ն. Ա.— *Զեկուցում ՍՄԿՊ XX համագումարի դիրեկտիվների մասին ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1956—1960 թվականների 6-րդ հնգամյա պլանի վերաբերյալ։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 4—6։*

Կագանովիչ Լ. Մ.— *Ճառ ՍՄԿՊ XX համագումարում։ 18 փետրվարի, 1956 թ.։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 38—43։*

Մալենկով Գ. Մ.— *Ճառ ՍՄԿՊ XX համագումարում։ 17 փետրվարի 1956 թ.։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 6—8։*

Արիստով Ա. Բ.— *ՍՄԿՊ XX համագումարի մանդատային հանձնաժողովի զեկուցումը։— «Սովետական Հայաստան», 1956, 19 փետրվարի։*

Մոսկատով Պ. Գ.— *ՍՄԿՊ Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցումը։— «Սովետական Հայաստան», 1956, 11 փետրվարի։*

Թովմասյան Ս. Հ.— *Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XVIII համագումարին։ (19-ին հունվարի 1956)։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 96—117։*



Խրուշչև Ն. Ս.— *Ճառ Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան Կենտրոնական ստադիոնի շինարարների ժողովում հուլիսի 31, 1956։ Ե., Հայպետհրատ, 1956, 24 էջ։*

*ՍՄԿՊ Կենտկոմի պլենումի որոշումը. ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության ղեկավարումը բարելավելու հարցերը (Ընդունված է ընկ. Ն. Ա. Բուլգանինի զեկուցման առթիվ)։— «Սովետական Հայաստան», 1956, 25 դեկտեմբերի։*

*ՍՄԿՊ Կենտկոմի պլենումի որոշումը 6-րդ հնգամյա պլանը կազմելու աշխատանքների ավարտման մասին և 1956—1960 թթ. կոնտրոլ թվերի ու 1957 թ. ժողովրդատնտեսական պլանի ճշգրտումների ուղղության մասին (Ընդունված է ընկ. ընկ. Ն. Կ. Բայբակովի և Մ. Զ. Սաբուրովի զեկուցումների առթիվ)։— «Սովետական Հայաստան», 1956, 25 դեկտեմբերի։*

*ԹՈՎՄԱՍՅԱՆ Ս.— ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում։— «Պարտիական կյանք», 1956, №1, էջ 15—29։*

Պետրոսյան Ս. Մ. և Խաչատրյան Գ. Մ.— *ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը Սովետական բազմազգ Պետության հզորության և ամրության հիմքն է։ Ե., Հայկ. ՍՍՌ քաղ. և գիտ. գիտելիքների տարածման ընկերության հրատ., 1956, 46 էջ։*

### 2. Սովետական դեմոկրատիայի առավելությունները

Լենին Վ. Ի.— *Բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների Համառուսաստանյան 3-րդ համագումարը 10—18 հունվարի 1918 թ.։ «Երկեր», հտ. 26։ Ե., Հայպետհրատ, 1951, էջ 533—591։*

Լենին Վ. Ի.— *Դեմոկրատիայի ու դիկտատուրայի մասին։ «Երկեր», հտ. 28։ Ե., Հայպետհրատ, 1951, էջ 475—481։*

Լենին Վ. Ի.— *Պետության մասին։ «Երկեր, հտ. 29։ Ե., Հայպետհրատ, 1951, էջ 578—604։*

Լենին Վ. Ի.— *Սովետական պետության աշխատանքի մասին (հոդվածներ, ելույթներ ու նամակներ)։ Ե., Հայպետհրատ, 1956, 354 էջ։*

Սովետական *Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարի բանաձևը։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 26—27։*

Խրուշչև Ն. Ս.— *Սովետական Միության Կոմունիստական Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 138—145։*



© National Library of Armenia

ՍՍՌՄ Կոնստիտուցիան։

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Կոնստիտուցիան (հիմնական օրենքը)։ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 4-րդ գումարման Գերագույն Սովետի 2-րդ և 3-րդ սեսիաներում ընդունված փոփոխումներով և լրացումներով։ Ե., Հայպետհրատ, 1957, 32 էջ։

Կանոնադրություն Հայկ. ՍՍՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունների։ Ե., Հայպետհրատ, 1956, 32 էջ։

Սովետական կոնստիտուցիայի օրը (առաջնորդող)։— «Սովետական Հայաստան», 1956, 5 դեկտեմբերի։

Սովետական Հայաստանի կոնստիտուցիայի 35 տարին։— «Սովետական Հայաստան», 1957, 2 փետրվարի։

## 3. ՍՍՌՄ հասարակական և պետական կառուցվածքը

Լենին Վ. Ի.— Ի պաշտպանություն սոցիալիստական հայրենիքի։ Ժողովածու։ Ե., Քաղ. գրակ. պետհրատ, 1940, 120 էջ։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարի բանաձևը։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 26—27։

Խրուշչև Ն. Ս.— Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 103—105, 138—142, 148։

Բուլգանին Ն. Ա.— Զեկուցում ՍՄԿՊ XX համագումարի դիրեկտիվների մասին, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1956—1960 թվականների 6-րդ հնգամյա պլանի վերաբերյալ։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 91—92։

Վորոշիլով Կ. Ե.— Ճառ ՍՄԿՊ XX համագումարում։ 20 փետրվարի 1956 թ.։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 18—21։

Պերվուխին Մ. Գ.— Ճառ ՍՄԿՊ XX համագումարում։ 22 փետրվարի 1956 թ.։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 25—29։

ՍՍՌՄ Կոնստիտուցիա։

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Կոնստիտուցիան (հիմնական օրենքը)։ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 4-րդ գումարման Գերագույն Սովետի 2-րդ և 3-րդ սեսիաների ընդունված փոփոխումներով և լրացումներով։ Ե., Հայպետհրատ, 1957, 32 էջ։



Առուշանյան Շ.— Մեծագույն ուշադրություն Սովետների գործունեության բարելավմանը։— «Պարտիական կյանք», 1956, № 7, էջ 32—37։

Իշխանյան Ս.— Հաղթանակած սոցիալիզմի կոնստիտուցիան։— «Ագիտ. բլոկնոտ», 1956, № 22, էջ 35—43։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի 3-րդ սեսիան։— «Ագիտ. բլոկնոտ», 1956, № 15, էջ 7—14։

Սերոբյան Ս.— Ժողովրդի ընտրյալները։— «Սովետական Հայաստան», 1956, № 3, էջ 17—18։

## 4. Սովետական ընտրական սիստեմը

Կանոնադրություն Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունների։ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության կողմից սահմանված ընտրական փաստաթղթերի հավելվածով և անհրաժեշտ պարզաբանումներով։ Ե., Հայպետհրատ, 1957, 74 էջ։

Ղևոնդյան Ս.— Աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների ընտրությունները։— «Ագիտ. բլոկնոտ», 1957, № 2, էջ 1—10։

Տեղական Սովետների ընտրությունները (առաջնորդող)։— «Սովետական Հայաստան», 1956, 28 դեկտեմբերի։

ՍՍՌՄ Կոնստիտուցիան։

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի կոնստիտուցիան (հիմնական օրենքը)։ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 4-րդ գումարման Գերագույն Սովետի 2-րդ և 3-րդ սեսիաներում ընդունված փոփոխումներով և լրացումներով։ Ե., Հայպետհրատ, 1957, 32 էջ։

## 5. Հոգատարությունը սովետական ժողովրդի բարօրության նկատմամբ՝ Կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության գործունեության բարձրագույն օրենքն է

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարի բանաձևը։ Ե., Հայպետհրատ, էջ 21—26։

Խրուշչև Ն. Ս.— Սովետական Միության Կոմունիստական



© National Library of Armenia

*պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 107—131, 148, 154, 184, 186։*

**Բուլգանին Ն. Ա.**— *Զեկուցում ՍՄԿՊ XX համագումարի դիրեկտիվների մասին ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1956—1960 թվականների 6-րդ հնգամյա պլանի վերաբերյալ։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 7—10, 79—87։*

**Միկոյան Ա. Ի.**— *Ճառ ՍՄԿՊ XX համագումարում՝ 16 փետրվարի 1956 թ.։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 11—13։*

**Շվերնիկ Ն. Մ.**— *Ճառ ՍՄԿՊ XX համագումարում 22 փետրվարի 1956 թ.։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 20—26։*

**Թովմասյան Ս. Հ.**— *Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XVIII համագումարին։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 76—92։*

**Խրուշչև Ն. Ս.**— *Ճառ Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան կենտրոնական ստադիոնի շինարարների ժողովում հուլիսի 31, 1956, Ե., Հայպետհրատ, 24 էջ։*

**Սովետական** *ժողովրդի բարօրության վերելքը (առաջնորդող)։— «Պարտիական կյանք», 1956, № 5, էջ 1—5։*

**Աշխատավորների** *պատվավոր պարտքը (Հայաստանի գյուղատնտեսությունը 6-րդ հնգամյակում։ Առաջնորդող)։— «Հայաստանի կոլտնտեսական», 1956, № 4, էջ 1—3։*

**Ասցատրյան Ե.**— *Արդյունաբերությունը 6-րդ հնգամյակում։— «Պարտիական կյանք», 1956, № 3, էջ 32—37։*

**36** *տարի։ (Առաջնորդող)։— «Սովետական Հայաստան», 1956, 29 նոյեմբերի։*

## 6. Սովետական միությունը խաղաղության և ժողովուրդների անվտանգության պատվարն է

**Սովետական** *Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարի բանաձևը։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 5—16։*

**Խրուշչև Ն. Ս.**— *Սովետական Միության Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 35—45, 56—57։*

**Բուլգանին Ն. Ա.**— *Հնդկաստան, Բիրմա և Աֆղանստան կատարած ուղևորության մասին։ Զեկ. ՍՍՌՄ Գերագույն Սովետի 4-րդ գումարման 4-րդ սեսիայում՝ 1955 թ. դեկտ. 20-ին։ Ե., Հայպետհրատ, 1956, 36 էջ։*

**Կագանովիչ Լ. Մ.**— *Ճառ ՍՄԿՊ XX համագումարում, 18 փետրվարի 1956 թ.։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 6—7։*

**Միկոյան Ա. Ի.**— *Ճառ ՍՄԿՊ XX համագումարում, 16 փետրվարի 1956թ.։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 13—20։*

**Մոլոտով Վ. Մ.**— *Ճառ ՍՄԿՊ XX համագումարում 18 փետրվարի 1956 թ.։ Ե., Հայպետհրատ, 1956, էջ 20—30։*

**Պատասխաններ** *ժամանակակից միջազգային հարաբերությունների վերաբերյալ հարցերին (հեռակա կոնսուլտացիա)։ Ե., Հայկ. ՍՍՌ քաղ. և գիտ. գիտելիքների տարածման Ընկերության հրատ., 1956։*

**Դալաքյան Գ. Մ.**— *Իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայումը։ Ե., Հայկ. ՍՍՌ քաղ. և գիտ. գիտելիքների տարածման Ընկերության հրատարակություն, 1956, 40 էջ։*

**Քոչարյան Ս. Ա.** *Ժողովուրդների ժամանակակից շարժումը խաղաղության համար։ Ե., Հայպետհրատ, 1956, 112 էջ։*

**Հարությունյան Գ.**— *Իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայումը։— «Պարտիական կյանք», 1956, № 3, էջ 15—20։*

**Տեր-Պետրոսյան Վ. Ի.**— *Սոցիալիստական վերափոխումները Չինական ժողովրդական ռեսպուբլիկայում։ «Պարտիական կյանք», 1956, № 8, էջ 62—68։*

**Կոլտիպին Վ.**— *Սովետական Միությունը խաղաղության և միջազգային անվտանգության համար մղվող պայքարում։— «Ագիտ. բլոկնոտ», 1956, № 21, էջ 8—12։*

**Սովետական** *կառավարության հայտարարությունը զինաթափման և միջազգային լարվածությունը նվազեցնելու հարցի մասին։— «Սովետական Հայաստան», 1956, 18 նոյեմբերի։*

**Սովետական** *Միության կառավարության դեկլարացիան Սովետական Միության և մյուս սոցիալիստական պետությունների բարեկամության և համագործակցության զարգացման ու հետագա ամրապնդման հիմունքների մասին։— «Սովետական Հայաստան», 1956, 1 նոյեմբերի։*

**Հաղորդագրություն** *Բուլղարիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի և Սովետական Միության կոմունիստական ու բանվորական պարտիաների և կառավարությունների ներկայացուցիչների Բուդապեշտում կայացած հանդիպման մասին։ (Առաջնորդող)։— «Սովետական Հայաստան», 195[illegible]*







© National Library of Armenia

Սովետական Միության և Գերմանական դեմոկրատական ռեսպուբլիկայի կառավարական պատվիրակությունների համատեղ հայտարարությունը։ (Առաջնորդող)։— «Սովետական Հայաստան», 1957, 8 հունվարի։

Մազոր Յա.— Միջազգային տեսություն։ Գաղութարարական դոկտրինա, որը դատապարտված է ձախողման։— «Սովետական Հայաստան», 1957, 15 հունվարի։

ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը այսպես կոչված «էյզենհաուերի դոկտրինայի» կապակցությամբ։— «Սովետական Հայաստան», 1957, 15 հունվարի։

Ժողովրդական տոնահանդեսներ Ուզբեկստանում։ Ընկ. Ն. Ս. Խրուշչևի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 15 հունվարի։

Համաժողովրդական տոն Ղազախստանի մայրաքաղաքում։ Ընկ. Կ. Ե. Վորոշիլովի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 16 հունվարի։

Լենինի շքանշանի հանձնումը Սարատովի մարզին։ Ընկ. Մ. Ա. Սուսլովի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 18 հունվարի։

Սովետական Միության և Չինական ժողովրդական ռեսպուբլիկայի ժողովուրդների բարեկամության միտինգը— «Սովետական Հայաստան», 1957, 19 հունվարի։

Սովետա-Չինական համատեղ դեկլարացիան։— «Սովետական Հայաստան», 1957, 20 հունվարի։

Լենինի շքանշանի հանձնումը Վորոնեժի մարզին։ Վ. Մ. Մոլոտովի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 20 հունվարի։

Տաջիկական ՍՍՌ-ին հանձնվեց Լենինի շքանշան։ Ն. Ա. Բուլգանինի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 22 հունվարի։

Լենինի շքանշանի հանձնումը Չելյաբինսկի մարզին։ Ա. Բ. Արիստովի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 22 հունվարի։

Տոնահանդես շքանշանակիր Թուրքմենստանի մայրաքաղաքում։ Ընկ. Ա. Ի. Միկոյանի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 23 հունվարի։

Լենինի շքանշանի հանձնումը Օմսկի մարզին։ Ընկ. Լ. Ի. Բրեժնևի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 23 հունվարի։

Լենինի շքանշանի հանձնումը Կրասնոյարսկի երկրամասին։ Ընկ. Լ. Մ. Կագանովիչի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 24 հունվարի։



Ալթայան երկրամասին հանձնվեց Լենինի շքանշան։ Ընկ. Ն. Ի. Բելյաևի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 24 հունվարի։

Լենինի շքանշանի հանձնումը Չկալովի մարզին։ Ընկ. Գ. Մ. Մալենկովի ճառը։— «Սովետական Հայաստան», 1957, 25 հունվարի։

Սովետա-չեխոսլովակյան համատեղ դեկլարացիա։— «Սովետական Հայաստան», 1957, 1 փետրվարի։

Սովետա-ֆինլանդական կոմյունիկե։— «Սովետական Հայաստան», 1957, 3 փետրվարի։

ՏԱՍՍ-ի հայտարարությունը։— «Սովետական Հայաստան», 1957, 2 փետրվարի։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի 6-րդ սեսիայի նյութերը։ Տես «Սովետական Հայաստան», 1957, փետրվար ամսի համարներում։

---

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

© National Library of Armenia

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | |
|---|---|---|
| | | էջ |
| 1. | Հայկական ՍՍՌ տեղական Սովետների ընտրությունները | 3 |
| 2. | Թեմաներ ցուցահանդեսների պատրաստման համար | 7 |
| 3. | Ցուցահանդեսի պլան | 7 |
| 4. | Թեմաներ դասախոսությունների, զեկուցումների կազմակերպման, բարձրաձայն ընթերցանությունների, զրույցների անցկացման համար | 10 |
| 5. | Հանձնարարվող գրականության թեմատիկ ցանկ | 12 |



ՎՖ 01428: Պատվեր 542: Տիրաժ 1800:

Հանձնված է տպագրության 6/II 1957 թ.
Ստորագրված է տպագրության 14/II 1957 թ.
Տպագրական 1,25 մամ., հրատ. 1,0 մամ.:
Անվճար:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության № 6 տպարան, Երևան, Լենինի պողոտա № 51, 1957 թ.:



ՀՀ Ազգային գրադարան
NL0198823
© National Library of Armenia

ԱՆՎՃԱՐ

© National Library of Armenia